ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1523-Ա « 02 » նոյեմբերի 2026թ.

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/399» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից ներկայացված դեկորների տեղադրումով գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/399» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Մ. Ասլանյան	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Ն. Գալստյան	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնական շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ
Մ. Մկրտչյան	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ

2. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանին:

3. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ. 1, հ. 123 սենյակ):

4. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 